ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ-ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԴԱՊԱՏՇԱՌՆԵՐԸ ԲԱՔՎՈՒՄ

Մ. Հովհաննիսյան
Երևանի պետհամալսարան

Խորհրդային իշխանության գոյության ընթացքում Բաքվում 1917-1918թթ. տեղի ունեցած քաղաքական զարգացումներն անաչառ ուսումնասիրության չենթարկվեցին, որի արդյունքում քաղաքի և, ընդհանրապես, շրջանի պաշտպանության շուրջ թույլ տված սխալներն ամբողջությամբ քարդվեցին տեղի «հակաբոլշևիկյան» քաղաքական ուժերի, այդ թվում՝ Դաշնակցության վրա: Ամեն կերպ քողարկվել կամ էլ խեղաթյուրվել է այդ տարիներին Բաքվում Դաշնակցության և բոլշևիկների միջև տեղ գտած համագործակցության պատմությունը: Ներկայումս, երբ հնարավոր է դարձել «քացել շատ փակագծեր», կարիք կա վերանայելու նաև այս խնդիրը:

1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Անդրկովկասում ձևավորվել էին երկու հիմնական հակադիր ճամբարներ: Դրանցից մեկը հակաբոլշևիկյան ճամբարն էր՝ Թիֆլիս կենտրոնով, իսկ մյուսը՝ բոլշևիկյան ճամբարը՝ Բաքու կենտրոնով: Հակաբոլշևիկյան տրամադրությունները հիմնականում գերիշխող էին վրաց և «աղրբեջանցի» բնակչության մեծամասնության վստահությունը վայելող մենշևիկյան և մուսավաթական ուժերի շրջանում: Հայկական կողմի ներկայացուցիչ Դաշնակցությունն էլ «մակընթացության» մեջ էր հայտնվել այս երկու ճամբարների միջև: Կանգնելով քարդ ընտրության առաջ՝ նա փորձում էր միաժամանակ օգտվել բոլոր հնարավոր տարբերակներից. «... Թիֆլիսի Ազգային Խորհուրդը, - գրում է Ա. Գյուլխանդանյանը, - տամինների ճնշման տակ, յանուն հայ ժողովրդի փրկության, ստիպված եղաւ, հակառակ իր սկզբունքներին, շեղումներ կատարել Դաշնակիցների վերաբերմամբ եւ Բաթումում հաշտութիւն կնքեց տամինների հետ: Մինչդեռ Բագուի Ազգային Խորհուրդը, գտնուելով տամինների ազդեցութիւնից մրանգամայն հեռու, որոշեց շարունակել Ազգային Խորհրդի նախկին քաղաքականութիւնը եւ, չկարողանալով համակերպուել Բաթումի դաշնագրին, ու ինքն իրեն համարելով հայ ժողովրդի իսկական կամքը, սկսեց զբաղուել ընդհանուր հայութեան վերաբերեալ խնդիրներով: Այդ նպատակով նա պատգամաւորութիւններ ուղարկեց Պարսկաստան՝ անգլիացիների մօտ եւ Մոսկուա՝ բոլշեւիկների եւ գերմանների մօտ...»:[1] Նման բազմաբալյ կոմբինացիայի սկիզբը Խորհրդային Ռուսաստանի հետ քարիդրացիական հարաբերությունների հաստատումն ու նրա օժանդակությունը ստանալն էր: Դրան հասնելու համար Դաշնակցությունը առաջին հերթին պետք է լեզու գտներ Անդրկովկասի բոլշևիկյան ուժերի հետ:

1917թ. նոյեմբերի 15-ին բոլշևիկները կարողացան Բաքվում իշխանությունը վերցնել իրենց ձեռքը:[2] Սակայն ավելի դժվար եղավ այդ իշխանությունը պահելը, ինչի համար էլ Բաքվում բոլշևիկները գնացին դաշնակցականների հետ համագործակցության: Նման քայլն ուներ իր դրդապատճառները: Դրանցից ամենախոսունը Անդրկովկասում և, մասնավորապես, Բաքվում տեղի ունեցած ընտրությունների արդյունքներն էին: Անդրկովկասում բոլշևիկների ցածր վարկանիշի մասին առաջին հերթին փաստում էին Սահմանադիր ժողովի անդրկովկասյան ընտրությունները: Առաջադրված 36 թեկնածուներից ընտրվում է միայն մեկը՝ Ստ. Շահումյանը, իսկ Կովկասի զինվորական ընտրական շրջանից էլ՝ բոլշևիկ Ա. Բադալը: Նույն

[1] Ա. Գիւլխանդանեան, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք» ամսագիր, ժԹ. տարի, թիւ 9/225/, Պոսթրն, յուլիս, 1941, էջ 101-102:
[2] Տե՛ս Մ. Սոգոմոնյան, Ստեփան Շահումյան, Երևան, 1978, էջ 432-433, նաև Ս. Մելիքյան, Սոցիալիստ-հեղափոխականները Հայաստանում և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում 1900-1920թթ., Երևան, 1997, էջ 96: Г. Пипия, Германский империализм в Закавказье в 1910-1918гг., Москва, 1978, с. 88:

ընտրություններում ավելի մեծ թվով պատգամավորական տեղեր են ստանում հակաբոլշևիկյան ճամբարի ներկայացուցիչներ համարվող մի շարք կուսակցություններ: Դրանցից առաջին տեղում էին մենշևիկները՝ 15 պատգամավոր, ապա իրար էին հաջորդում դաշնակցականները՝ 10 պատգամավոր, էսէռները՝ 8 պատգամավոր, մուսավաթականները՝ 7 պատգամավոր:[3] Նույն պատկերն արտացոլված էր Անդրկովկասի քաղաքական կյանքում: Բոլշևիկները չկարողացան իշխանության համար պայքարում լիարժեք հաղթանակի հասնել Անդրկովկասում: Դրա հիմնական պատճառը ոչ այնքան մի շարք բոլշևիկների անվճռականությունն էր, ինչպես խորհրդահայ պատմագրության մեջ էր ընդունված համարել[4], այլ բոլշևիկների՝ Անդրկովկասում ունեցած չափազանց ցածր վարկանիշը, որի մասին էլ փաստում էին վերը նշված ընտրության արդյունքները: Համանման վիճակ էր նաև Բաքվում կայացած ընտրություններում: Սահմանադիր ժողովի 1917թ. նոյեմբերի 26-ին (դեկտեմբերի 9-ին) Բաքվի շրջանում անցկացված ընտրություններում քաղաքաբնակների ձայները բաշխվել էին հետևյալ հերթականությամբ. Դաշնակցություն՝ 12.157, Մուսավաթ՝ 9669, բոլշևիկներ՝ 9109, էսէռներ՝ 8328, կադետներ՝ 7346, մենշևիկներ՝ 3899, ևս երեք քաղաքական ուժեր ստացել էին շատ չնչին ձայներ: Բաքվի արհեստավորական շրջաններից ստացված ձայներն էլ բաշխվել էին այլ հերթականությամբ. Մուսավաթ՝ 12.066, էսէռներ՝ 8900, Դաշնակցություն՝ 7602, բոլշևիկներ՝ 5393, մենշևիկներ՝ 1483, կադետներ՝ 1088: Այլ պատկեր էր ստացվում զինվորականության տված ձայներից. բոլշևիկներ՝ 7699, էսէռներ՝ 1541, կադետներ՝ 620, դաշնակցականներ՝ 555, մենշևիկներ՝ 277, մուսավաթականներ՝ 21: Այսպիսով, կուսակցություններից յուրաքանչյուրի ստացած ընդհանուր ձայների քանակը հետևյալն էր. բոլշևիկներ՝ 22.201, մուսավաթականներ՝ 21.756, դաշնակցականներ՝ 20.314, էսէռներ՝ 18.769, կադետներ՝ 9054, մենշևիկներ՝ 5659:[5] Ցարիզմի տապալումից հետո բոլշևիկները Բաքվում դանդաղ քայլերով էին բարձրանում իշխանության սանդուղքով: Առաջին քայլը 1917թ. սեպտեմբերին նշանակված Բաքվի քաղաքային խորհրդի ընտրություններն էին, որոնց արդյունքում կուսակցությունները դասավորվում են հետևյալ հերթականությամբ. էսէռներ՝ 19 պատգամավոր, մենշևիկներ՝ 17, դաշնակցականներ՝ 16, մուսավաթականներ՝ 16, Ռուսաստանի մուսուլմանների կուսակցություն՝ 12, բոլշևիկներ՝ 9, կադետներ՝ 8 և այլն:[6] Իրադարձությունների ականատես կադետ Բ. Բայկովը գրում է, որ բոլշևիկները միայն ընտրությունների վերջում Բաքվում հայտնված զինվորականների կողմից ստացած քվեների միջոցով են կարողանում ապահովել այդ 9 պատգամավորական տեղերը, և ավելացնում. «Չլիներ դա, հավանաբար բոլշևիկներն ընդհանրապես ներկայացված չէին էլ լինի Բաքվի քաղաքային խորհրդում»:[7] Հոկտեմբերյան հեղաշրջման հաղթանակի ալիքների վրա Բաքվի բոլշևիկները 1917թ. դեկտեմբերին նախաձեռնում են նոր ընտրություններ, որոնցում նրանց հաղթանակը այդքան էլ լիարժեք չէր. բոլշևիկներ՝ 51 պատգամավոր, դաշնակցականներ՝ 41, ձախ էսէռներ՝ 38, աջ էսէռներ՝ 28, մուսավաթականներ՝ 21, մենշևիկներ՝ 11:[8] Նման արդյունքների դեպքում բոլշևիկները կարող էին հայտնվել Բաքվի խորհրդում ոչ թե հաղթանակած մեծամասնության, այլ մենությունից զրկված փոքրամասնության դերում: Դրա համար բավական էր, որ դաշնակցականները, աջ էսէռները,

[3] Տե՛ս Г. Акопян, Степан Шаумян. Жизнь и деятельность /1878-1918/, Москва, 1973, с. 145:
[4] Տե՛ս L. Խուրշուդյան, Ստեփան Շահումյան.Պետական և պարտիական գործունեությունը 1917-1918 թթ., Երևան, 1959, էջ 139-143:
[5] Տե՛ս С. Беленький и А. Манвелов. Революция 1917г. в Азербайджане /хроника событий/, Баку, 1927, с. 214:
[6] Տե՛ս «Архив русской революции» изданный. И. Гессеном, т. 9 -10, Москва, 1991, с. 111:
[7] Նույն տեղը, с. 110:
[8] Տե՛ս Ս.Հ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 117, նաև Я. Ратгаузер, Революция и гражданская война в Баку 1917-1918гг., ч. 1, Баку, 1927, с. 104; Մ. Արզումանյանը և Ս. Մելիք-Յոլչյանը այլ թվային տվյալներ են բերում, որոնց արդյունքում, սակայն, կուսակցությունների զբաղեցնած տեղերի հերթականությունը չի փոփոխվում – Մ. Արզումանյան, Ստեփան Շահումյան, Երևան, 1978, էջ 435; Ս.Մելիք-Եոլչեան, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք» ամսագիր, Գ. տարի, թիւ 7/31/, մայիս, 1925, էջ 108:

մուսավաթականները և մենշևիկները համատեղ հանդես գային: Խորհրդահայ պատմագրության մեջ, անկախ բոլոր հերյուրանքներից, չէին կարող անտեսել այս տեսնդենցը. «Պետք է նկատի ունենալ, -գրում է Մ. Արզումանյանը, - որ այդ կուսակցությունները (դաշնակցական, մուսավաթական, աջ էսէռական, կադետական, մենշևիկյան - Մ. Հ.) որոշակի ազդեցություն ունեին մասսաների մեջ: ... Ճիշտ է, բոլշևիկներն, ըստ արժանվույն, գնում էին առջևից, բայց մնացածների բլոկը գերակշռություն էր տալիս նրանց»:[9] Դեռ թարմ էին այս կուսակցությունների՝ միասին գործելու հիշողությունները, երբ վերջիններս համախմբվել էին հակաբոլշևիկյան Հանրային ապահովության կոմիտեում, ինչպես նաև, երբ 1917թ. մայիսի 11-ի Բաքվի նորընտիր խորհրդի նախագահի ընտրության ժամանակ նշված քաղաքական ուժերն այդ պաշտոնում ընտրում են էսէռ Սաքո Սահակյանին՝ խափանելով Շահումյանի ընտրվելուն ուղղված բոլշևիկների ջանքերը: Այդպիսի սցենարի կրկնվելու հնարավորությունը լուրջ դրդապատճառ էր, որպեսզի բոլշևիկները համագործակցության գնային նշված քաղաքական ուժերից որևէ մեկի հետ: Հարց էր ծագում, թե ո՞ր ուժի: Սկզբնական շրջանում բոլշևիկները չէին կորցրել Բաքվի թաթարներին իրենց կողմը գրավելու հույսերը՝ նպաստելով միայն թաթար բոլշևիկներից կազմված Հումմեթ կուսակցության ստեղծմանը:[10] Այս «մուսուլման բոլշևիկների» կուսակցությունը՝ Ն. Նարիմանովի գլխավորությամբ, մեկ անգամ չէ, որ ապացուցում է իր գոյության անարդյունավետությունը: Բաքվի բոլշևիկները, չնայած չեն կասեցնում Հումմեթի գործունեությունը՝ հավանաբար պահելով նրան որպես «պահեստային ուժ», այնուամենայնիվ, ընտրություններում նրա ցույց տված արդյունքները ուղղակի ստիպում են բոլշևիկյան վերնախավին հայացքը թեքել դեպի Դաշնակցություն: Դրդապատճառներից մեկն էլ այն էր, որ այս կուսակցությունների միջև արդեն նկատելի էին համագործակցության նշաններ՝ ի դեմս «Թուրքահայաստանի մասին» դեկրետի և թիֆլիսյան համաձայնագրի*: Հենց այս համաձայնագրով էլ նախատեսվում էր լուրջ համագործակցություն Դաշնակցության ու բոլշևիկների միջև Անդրկովկասի տարածքում, այդ թվում նաև՝ Բաքվում: Բոլշևիկների ու դաշնակցականների միջև համագործակցության օգտին էր խոսում նաև առկա ռազմաքաղաքական իրադրությունը, որը հայությանը ուղղակի ֆիզիկական ոչնչացման առաջ էր կանգնեցրել: Նշված կուսակցություններից միայն Դաշնակցությունն էր, որ մինչև վերջ փորձելու էր խոչընդոտել թուրքական զորքերի կողմից Բաքուն գրավելու ծրագրի իրականացմանը, իսկ Մուսավաթը հակառակ դիրք էր զբաղեցնելու: Դրա պատճառն այն էր, որ բոլշևիկների ծրագրերում չէր նախատեսվում Բաքվի կորուստը, ուստի տրամաբանական էր, որ նրանք պետք է ձգտեին այս հարցում համագործակցել իրենց հետ հակախոհ ուժի՝ Դաշնակցության հետ: Դաշնակցականները ևս ձգտելու էին այդ համագործակցությանը՝ ելնելով ազգապահպանման խնդրի պահանջից: Նման կարծիք ունեին նույնիսկ ռուս հակաբոլշևիկները: Գեներալ Դենիկինը, հիշելով հայ ժողովրդի ծանր վիճակը Հայաստանի հանրապետության հռչակումից առաջ և հետո, նշում է, որ Դաշնակցությանը ուղղակի անհրաժեշտ էր կապը Ռուսաստանի հետ, և ընդգծում. «Ցանկացած Ռուսաստանի, անկախ նրա քաղաքական կարգից, թենուզ և խորհրդային, միայն թե նա տիրապետեր ուժի և հայ ժողովրդին փրկելու հնարավորություն ունենար»:[11] Իսկ կադետ Բ. Բայնդովն իր հերթին գրում է, որ Բաքվում որքան վատ էր արտահայտվում թաթարների անջատողականությունը, այնքան ավելանում էր հայերի՝ ռուսամետ լինելու ցանկությունը. «Հայերի մեջ, -հիշում է Բայնդովը, - ընդգծված կերպով խոսում էր ինքնապահպանման բնազդը: ... Հայերի հենց այդ

[9] Մ. Արզումանյան, Ստեփան..., էջ 435:
[10] Տե՛ս «Архив русской ...», с. 108:
* 1917թ. դեկտեմբերի 4-ից մինչև հունվարի վերջը Թիֆլիսում Դաշնակցության ներկայացուցիչների և բոլշևիկների միջև ընթացած բանակցությունների արդյունքում կնքված համաձայնագրով նախատեսվում էր, որ Անդրկովկասի խորհրդայնացման գործում բոլշևիկները, ստանալով դաշնակների օժանդակությունը, ապահովելու էին հայերի ֆիզիկական անվտանգությունը, ընդունելու էին որպես ինքնավար մարզ Արևելյան Հայաստանը խորհրդային Ռուսաստանի կազմում և տալու էին Արևմտահայաստանին անկախություն:
[11] А. Деникин, Очерки русской смуты, Москва, 1991, с. 140:

հոգեբանական վիճակով էլ նաև քաջատրվում էր նրանց՝ նույնիսկ բոլշևիկների հետ գնալու հակվածությունը: Հայերն անկեղծ ասում էին. «Մենք ռուսների հետ ենք, եթե նույնիսկ նրանք բոլշևիկներ են»»:[12] Քաղաքի բնակչության վիճակագրական տվյալներն ուղղակի «պարտադրում» էին բոլշևիկներին հաշվի նստել Դաշնակցության հետ: 1912թ. հունվարի 1-ի տվյալներով Բաքվի նահանգում հաշվառվել էր 846.553 մահմեդական (շիա և սունի թաթարներ, վրացիներ, քրդեր, կովկասյան լեռնականներ), 167.814 ռուս, 115.621 հայ: Իսկ Բաքու քաղաքում նույն ժամանակ բնակվում էր 174.469 մահմեդական, 103.527 ռուս, 73.341 հայ:[13] Տվյալները մեկ տարի անց համաչափ փոփոխություն էին կրել: 1913թ. Բաքվի նահանգում բնակվում էր 72.6456 մահմեդական կրոնի ներկայացուցիչ (շիա և սունի թաթարներ, վրացիներ, քրդեր, կովկասյան լեռնականներ), 178.420 ռուսներ, 116.918 հայեր: Նրանցից 175.185 մահմեդական, 103.902 ռուս, 74.066 հայ բնակվում էին Բաքվում: 1913թ. պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ Բաքվի նահանգում բնակվում էր 726.456 մահմեդական կրոնի ներկայացուցիչ (շիա և սունի թաթարներ, վրացիներ, քրդեր, կովկասյան լեռնականներ), 178.420 ռուսներ, 116.918 հայեր: Նրանցից 175.185 մահմեդական, 103.902 ռուս, 74.066 հայ բնակվում էին Բաքվում:[14] Այսպիսի տվյալների համադրումը ենթադրել է տալիս, որ մինչև 1918թ. սկիզբը Բաքվի բնակչության թվաքանակի հարցում, գոնե մուսուլմանների ու հայերի դեպքում, դժվար թե լուրջ տեղաշարժեր լինեին: Ակնհայտ էր, որ մուսուլմանների մեծ մասը չէր ընդդիմանա եղբայրական Թուրքիային, իսկ հայերը կորցնելու շատ բան ունեին: Չի բացառվում, որ տեղի բոլշևիկների պարագլուխների մեջ մեծամասնություն կազմող, ազգությամբ հայ գործիչների ազգային պատկանելությունն էլ որոշակի դեր խաղացած լիներ այդ համագործակցության կայացման գործում: Դրա հետ մեկտեղ՝ չի կարելի նաև բացառել անձնական կապերի գործոնը՝ մասնավորապես Ռուստոմի և Ստ. Շահումյանի դեպքում[15]:

Խոսքը տանք դաշնակցական ու խորհրդահայ պատմագրության ներկայացուցիչներին: Ռուբեն Դարբինյանը, խոսելով Բաքվում բոլշևիկների հետ Դաշնակցության համագործակցության մասին, նշում է. «Ու թէեւ մենք՝ Դաշնակցականներս, մեր գաղափարներով եւ քաղաքական ծգտումներով հակառակ էինք Խորհրդային իշխանութեան, բայց գտնելով թրքական մահացու վտանգին ներքեւ՝ հարկադրուած էինք պայքար չմղել բոլշեւիկներուն դէմ, մանաւանդ որ Բագուի կամ կովկասեան Ատրպէյճանի մէջ հայութիւնը չէր կրնար հետապնդել ազգային ուրոյն քաղաքական յատուկ նպատակներ: Մենք հոն ունէինք միայն *ինքնապաշտպանութեան* խնդիրներ եւ այդ պատճառով ալ կ՚աշխատէինք *չեզոքութիւն* պահել բոլշեւիկներու եւ թրքական Մուսաւաթի հանդէպ, որոնք արդէն խուլ պայքարի մէջ էին իրարու հետ:

Սակայն, շուտով պարզուեցաւ, որ մենք չպիտի կարողանանք պահել մեր նախասիրած չեզոքութիւնը: Նախ որ՝ բոլշեւիկները շատ տկար էին Բագուի մէջ եւ անխուսափելի պիտի ըլլար անոնց պարտութիւնը թրքական Մուսաւաթէն, որ լաւ զինուած՝ զօրացած էր տաճկական զինուորական գերիներու շնորհիւ: Երկրորդ՝ բոլշեւիկներու պարտութենէն յետոյ, կասկած չկար, որ Մուսաւաթը պիտի հաշիւ մաքրէր հայերուս հետ: Եւ, վերջապէս, հայ զանգուածները չէին

[12] «Архив русской ...», с. 116:

[13] Տե՛ս «Кавказскій календарь на 1913 г.», под ред. А. Эльзенгера и Н. Стельмащука, Тифлисъ, 1912, с. 128 -131; Ա. Գյուլխանդանյանի հաղորդած տվյալների համաձայն Բաքու քաղաքում մահմեդականների թիվը հասնում էր 176.187-ի, ռուսներինը՝ 103.527-ի, հայերինը՝ 73.351-ի - Ա. Գիւլխանդանեան, Բագուի..., «Հայրենիք» ամսագիր, ԺԹ. տարի, թիւ 9/225/, Պոսթըն, յուլիս, 1941, էջ 93:

[14] Տե՛ս «Кавказскій календарь на 1914 г.», под ред. А. Эльзенгера и Н. Стельмащука, Тифлисъ, 1913, с. 110 -113; 1913թ. Բաքվի վիճակագրական տվյալներ է հաղորդում նաև Բ.Իշխանյանը, ըստ որի մահմեդականների թիվը հասնում էր 101.803-ի, ռուսներինը՝ 67.730-ի, հայերինը՝ 57.040-ի - Բ.Իշխանեան. Վիճակագրական ուսումնասիրութիւն անդրկովկասեան ժողովուրդների, Բաքու, 1919, էջ 183:

[15] Տե՛ս Ա. Ալչութեան, Ռուստոմ Բագուում, «Հայրենիք» ամսագիր, ԼԴ. տարի, թիւ 11/369/, Պոսթըն, նոյեմբեր, 1956, էջ 59; նաև «Ռուստոմ.մարուան պաթսունամեակին առթիւ», Պէյրութ, 1979, էջ 354:

կարող բոլորովին անտարբեր մնալ այն կռուի հանդէպ, զոր սկսած էին բոլշեւիկները Մուսաւաթի դէմ, մանաւանդ որ անոնք (բոլշեւիկները) ոչինչ կը խնայէին՝ իրենց կողմը քաշելու համար հայերը»:[16] Այս մեկնաբանությունները գալիս են լրացնելու մեր նշած դրդապատճառները: Հետաքրքիր է, որ խորհրդահայ պատմագրության մեջ էլ եղան այդ համագործակցության վերաբերյալ սթափ գնահատականներ: Գ. Հակոբյանի մոտ կարդում ենք. «Ուժերի հարաբերակցությունը (Բաքվում – Մ. Հ.) այնպիսին էր, որ բոլշևիկները չէին կարող միայնակ իշխանություն ձևավորել ու տանել իրենց ուղեգիծը»: Այնուհետև, անդրադառնալով Դաշնակցության՝ բոլշևիկների հետ համագործակցելու շահերին՝ նա նշում է. «Բաքվի դաշնակները զգուշանում էին գերմանա-թուրքական զավթիչների Անդրկովկաս գալուց, կողմնորոշվում էին դեպի Ռուսաստան և Բաքվում աջակցում բոլշևիկների իշխանությանը որպես համառուսական իշխանության ներկայացուցիչների»:[17] Ի մի բերելով երկու հեղինակների մեկնաբանությունները՝ գալիս ենք այն եզրակացության, որ այդ համագործակցության Բաքվի փուլը երկու կուսակցությունների համար էլ կառուցված էր փոխշահավետության սկզբունքի վրա: Դաշնակցության համար դա թուրքական վտանգից պաշտպանվելու բոլշևիկյան Ռուսաստանի երաշխիքն էր, իսկ բոլշևիկների համար՝ Դաշնակցության հնարավորությունների օգտագործման անհրաժեշտությունը: Փաստորեն, այս սկզբունքների անփոփոխ մնալով էր պայմանավորված նշված համագործակցության տևողությունը:

М.Оганнисян: Мотивы сотрудничества партии Дашнакцутюн и большевиков в Баку.

В данной статье мы попытались представить те мотивы, которые способствовали сотрудничеству партии большевиков и Дашнакцутюн в г. Баку. Мотивов несколько: низкие показатели в выборах большевиков в городские и районные органы местного самоуправления, наличие разных национальностей, а именно: татар (азербайджанцев), армян, русских и т.д.

M. Hovhannisyan: The motives of the cooperation of Dashnaktsutyun and bolshevics in Baku.

In this article we tried to represent those reasons which contribute to the formation of relations between Dashnaktsutyun and bolshevics in Baku. The motives are-

The low rating results in the elections of the urban and regional local self governing bodies of Bolsheviks, the presence of different nations especially of tatars /azerbaijanians/, armenians, russions and others.

[16] Ռ. Դարբինեան, Փոթորիկի օրերուն, «Հայրենիք» ամսագիր, ԻԶ. տարի, թիւ 1/264/, Պոսթըն, լուսնուար, 1948, էջ 22:
[17] Գ. Ակոպян, նշվ. աշխ., ս. 173: